

մինչդեռ զրաբարը՝ ոչ: Ուրեմն արեւմտեան արտասանութիւնը աւելի հին է քան զրաբարը և հետեւաբար արեւմտեան բարբառները աւելի հին են քան զրաբարը:

Սակայն վերի բառերի մէջ կան նաեւ այնպիսի բառեր, որոնք ոչ թէ բնիկ հայերէն են, այսինքն հնդեւրոպական ծագում ունին, այլ փոխառեալ են հարեան լեզուներէ: Այսպէս օրինակ պատկեր և կարմիր: Արդ այս բառերի մայր ձեւերն են պէլ. պատկար, կարմիր, որոնցից երեւում է թէ նոյն պ, կ, տ ձայների բ, գ, դ արտասանութիւնը համապատասխան է մայր ձեւերին, որոնք պահանջում են պ, կ, տ ըստ արեւելեան արտասանութեան:

Ի՛նչ է հետեւում պ, կ, տ... ձայներին այս երկդիմի դիրքից արեւմտեան արտասանութեան մէջ: Հետեւում է այն, որ ձայնաշրջութիւնը տեղի է ունեցած երկու անգամ. հնիս. բ, գ, դ... տեւլ են նախահայերէնում բ, գ, դ... որ յետոյ Ե. դարում արդէն դարձել էր պ, կ, տ... Այս պ, կ, տ... ձայները երկրորդ անգամ փոխուելով (Ե. դարից յետոյ) դարձել են բ, գ, դ... և այս երկրորդ ձեւն է որ գտնում ենք արեւմտեան արտասանութեան մէջ: Եթէ արեւմտեան արտասանութեան բ, գ, դ... հնչիւնները ներկայացնէին նախահայերէնի բ, գ, դ... հնչիւնները, պէտք էր որ այժմ արեւմտեան արտասանութեան մէջ գտնէինք մի կողմից դասը, դուն, զին, բայց միւս կողմից պատկեր, կարմիր, եւ ոչ թէ բազդեր, գարմիր: Այս բոլորից հետեւում է այն որ նաեւ այս կէտում էլ, ուր արեւմտեան բարբառները զրաբարից աւելի հին լինելու երեւոյթն են ընծայում, զրու-թիւնը նոյն է, այսինքն զրաբարը աւելի հին է, և բարբառները ծագած են նրանից շատ աւելի ուշ:

Եթէ բարբառները զրաբարի աւելի նոր ձեւափոխութիւններն են, պէտք է քննել թէ երբ են ձեւացել նրանք:

Նախ առնենք Ագուլիսի բարբառը՝ վերե յիշուած պատճառներով:

Գիտենք թէ Ագուլիսի բարբառի մէջ հայերէն բառերի ա ձայնաւորը դառնում է օ, ու. թուրքերէնից և ռուսերէնից փոխառեալ բառերը չեն ենթարկւում այդ ձայնափոխութեան, բայց պարսկերէն և արաբերէն բառերը բնիկ հայ բառերի նման են:

Թարկւում են: Այս երեւոյթը ստոյգ է ոչ միայն ա ձայնի, այլ և ուրիշ ձայնաւորների համար էլ:

Ստորե տալիս ենք այս կարգի փոխառեալ բառերի մի խումբ օրինակներ, իրենց մայր ձեւերով միասին.

ռաստ «պատահիլ» — թրք. ռաստ

թարս «հակառակ» — թրք. թարս

շան «մեղրահաց» — թրք. շան

սաս «ձայն» — թրք. սաս

նազմը «ական» — թրք. նազմը

վազ «պտղաման» — ռուս. վազ

ջուն «հոգեհասկ» — պրս. ջան

բօշ «պարապ» — թրք. բօշ

նոյնը «պայտ» — արաբ. նալ

քյարվան «կարաւան» — պրս. քյարվան

փահմ «հասկացողութիւն» — արաբ. ֆահմ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(ՎԵՐԸ ԵՎԵՐԴԻՆԷ)

ՀԱՒԱՏՔԻ ԵՒ ՄՏԱԾՄԱՆ ՅՈՒՔԵՐ

Ազգի մը, ժողովուրդի մը, հասարակութեան մը համար, «գէտ օրեր»ը, գրաբարին աւելի ուժեղ բացատրութեամբ՝ «ժամանակի չարք»՝ ապականութեան եւ ընդհանուր ինկածութեան այն ժամանակաշրջաններն են, որոնք ընդհանրապէս հետեւանք կ'ըլլան կրօնական անգամութեան եւ կենցաղական յլիանքի ցոյց եւ շուայտ սասկոյթիւններէն, ինչպէս նաեւ լանխազոյն միակողմանի եւ անմիջ դաստիարակութեան մը աւերներէն ծնունդ առած ապերասան ազատութեան: Երբ անգամ մը ախար վարակի սիրէ սիրս եւ տունէ տուն, մարդիկ այլեւս հանրութեան բարիքն զգացումը կը սուզեն՝ կը մոռնան իրենց անձին պատշաճութիւն մէջ, որ կ'ըլլայ այնուհետեւ իրենց միակ կրօնք՝ որուն իբրեւ ծես կ'ընդունին ընչափազոյթիւնը, եւ իբրեւ խորհուրդ՝ հիմունք հաւատոյ՝ կոյր ինքնավստահութիւնը: Տարուած այս վերջին մոլորեանէն՝ անոնք ա'լ քամանակ միայն կ'ունենան իրենց խօսքերուն մէջ այլոց նկատմամբ, ապերաստութիւն՝ իրենց ծնողաց հանդէպ, ու ամբարիտ վերաբերմունք ամեն բանի համար՝ որմէ չի կրնար ախորժիլ իրենց խանգարուած խղմանակը:

«ԱՌԱՔԵԼՈՑ ԵՄԻՆՂՈՎ»